Հետևեք մեզ՝

ey.com/en_am
facebook.com/EYArmenia/
https://www.linkedin.com/company/ernstandyoung

Ծանուցում եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման վերաբերյալ

Փետրվար 2024

Փաստեր

2023թ. հաշվետու տարուց սկսած՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «ՀՀ») ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիների առանձին խմբեր հարկային մարմին են ներկայացնելու եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

© 2024 Ernst &Young CJSC
https://www.ey.com/en_am

Առաջադրված փոփոխություններին ազդեցության ենթարկվող խմբեր

2023թ. հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրերը) ներկայացնելու են հետևյալ ֆիզիկական անձինք՝

- 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները,
- ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, որոնք 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022թ. արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),
- ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրական շահառու են համարվում: Իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝.
  - **ա)** ուղղակի կամ անուղղակի տիրապետում են տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
  - **բ)** տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
  - **գ)** հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ,
- ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիները, որոնք 2023թ. ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն:

Ինչպես EY ընկերությունը կարող է աջակցել

- Աջակցություն ՀՀ ռեզիդենտ քաղաքացիների՝ 2023 թ. հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրերը) ներկայացնելու չափանիշներին համապատասխանելու վերլուծության հարցում:
- Աջակցություն անձնական եկամտահարկի տարեկան հայտարարագիրը կազմելու և Հայաստանի հարկային մարմին ներկայացնելու հարցում:

© 2024 Ernst &Young CJSC
https://www.ey.com/en_am

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել հարկային և իրավաբանական ծառայություններ մատուցող թիմի հետ՝

Կամո Կարապետյան | Գործընկեր | Հարկային ծառայությունների ղեկավար
EY Հայաստան
Վազգեն Սարգսյան 2 շենք, «Կամար» բիզնես կենտրոն, Երևան, Հայաստան
Հեռ՝ +374 (60) 50 77 77
Բջջ՝ +374 (99) 88 67 00
Kamo.Karapetyan@am.ey.com

Միքայել Արզումանյան | Մենեջեր | Հարկային ծառայություններ
EY Հայաստան
Վազգեն Սարգսյան 2 շենք, «Կամար» բիզնես կենտրոն, Երևան, Հայաստան
Հեռ՝ +374 (60) 50 77 77
Բջջ՝ +374 (44) 80 80 05
Mikayel.Arzumanyan@am.ey.com

Տեղեկատվություն EY ընկերության մասին

Հետևելով իր առաքելությանը՝ կառուցել բարեկեցիկ աշխարհ, EY ընկերությունը նպաստում է երկարաժամկետ դրական ազդեցության ստեղծմանը՝ ի շահ հաճախորդների, աշխատակիցների և հասարակության, ինչպես նաև կապիտալի շուկաներում հասարակության վստահության ամրապնդմանը:

EY ընկերության բազմագործառույթային թիմերը տվյալների և տեխնոլոգիաների միջոցով ավելի քան 150 երկրներում ապահովում են տեղեկատվության նկատմամբ վստահություն՝ հաստատելով վերջինիս արժանահավատությունը և օգնում են հաճախորդներին ընդլայնել, վերափոխել և արդյունավետ վարել իրենց գործունեությունը:

Աշխատելով աուդիտորական, խորհրդատվական, իրավաբանական, ռազմավարության, հարկային և գործարքների ուղեկցման բնագավառներում՝ EY ընկերության մասնագետները ճիշտ հարցադրումներ են կատարում, որոնք թույլ են տալիս գտնել նոր պատասխաններ այսօրվա մարտահրավերներին:

EY անվանումը վերաբերում է գլոբալ կազմակերպությանը և կարող է վերաբերել Ernst & Young Global Limited-ի անդամ հանդիսացող մեկ կամ մի քանի ընկերությունների, որոնցից յուրաքանչյուրն առանձին իրավաբանական անձ է: Ernst & Young Global Limited բրիտանական ընկերությունը սահմանափակված է իր մասնակիցների երաշխիքներով և հաճախորդներին ծառայություններ չի մատուցում: Տեղեկատվությունն այն մասին, թե ինչպես է EY ընկերությունը հավաքագրում և օգտագործում անձնական տվյալները, ինչպես նաև տվյալների պաշտպանության օրենսդրությամբ սահմանված անհատների ունեցած իրավունքների նկարագրությունը հասանելի է ey.com/privacy կայքում: Մեր կազմակերպության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ey.com վեբ-հասցեում:

EY ընկերությունը համագործակցում է Կովկասում և Կենտրոնական Ասիայում աշխատող ընկերությունների հետ՝ աջակցելով իրենց գործնական նպատակների իրականացմանը: Շուրջ 1700 մասնագետներ աշխատում են 8 գրասենյակներում՝ Ալմաթիում, Աթիրաուում, Աստանայում, Բաքվում, Բիշքեկում, Տաշքենդում, Թբիլիսիում, Երևանում:

© 2024 «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

https://www.ey.com/en_am

ey.com/am